ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

"22" ապրիլի 2024 թվական N 05-Ն

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 12-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետի և 10-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2023 թվականի նոյեմբերի 24-ի «2024 թվականի փոստային վճարման պետական նշանների թեմաները սահմանելու և փոստային վճարման պետական նշանների անվանագները, տպաքանակն ու գործողության մեջ դնելու ժամկետները հաստատելու մասին» N 12-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 4-րդ կետի 3-րդ ենթակետի՝ «Տպաքանակը (հատ)» սյունակի «10 000» թիվը փոխարինել «9000» թվով.
2) 5-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերի, 6-րդ կետի 1-ին ենթակետի, 10-րդ կետի 1-ին ենթակետի և 14-րդ կետի 1-ին ենթակետի՝ «Գործողության մեջ դնելու ժամկետը» սյունակի «I եռամսյակ» բառերը փոխարինել «II եռամսյակ» բառերով.
3) 6-րդ կետի 2-րդ ենթակետի՝ «Քանակը» սյունակի «1 նամականիշ» բառերը փոխարինել «1 նամականիշով գեղաթերթիկ» բառերով, «Տպաքանակը (հատ)» սյունակի «20 000» թիվը փոխարինել «80 000» թվով.
4) 5-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

4)	Վալենտին Պոդպոմոգովի ծննդյան 100-ամյակ	2 նամականիշ	II եռամսյակ	320 380	10 000 x 2

»

5) Հավելվածը լրացնել նոր 16-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

16.	ԱՐԱԳԱԾ ԼԵՌԸ ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ				
1)	Արագած լեռը հայ գեղանկարչության մեջ	5 նամականիշով գեղաթերթիկ	II եռամսյակ	200 320 380 400 500	10 000

»

2. Հաստատել փոստային վճարման պետական նշանների նմուշները՝

1) Միջազգային. Եվրասիական տնտեսական միություն թեմային նվիրված «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ. ЕВРАЗИЙСКИЙ ЭКОНОМИЧЕСКИЙ СОЮЗ» 1 նամականիշի, համաձայն N 1 հավելվածի:

2) Մեծանուն հայեր. Պարույր Սևակի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ. PARUYR SEVAK/1924-1971. ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ. ARMENIAN POET» 1 նամականիշով գեղաթերթիկի, համաձայն N 2 հավելվածի:

3) Մեծանուն հայեր. Վրույր Գալստյանի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «հայ նկարիչ. ՎՐՈՒՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ. VRUIR GALSTYAN. Armenian painter. 1924-1996. 100TH. ԱՄՅԱԿ. ANNIVERSARY. ԲՆԱՆԿԱՐ. 1966. LANDSCAPE. ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ. 1964. SELF-PORTRAIT. ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆԵՐ. 1967. STUDENTS. ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ. ՍՈՒՐՃԻ ԳԱՎԱԹՆԵՐ1986. STILL LIFE. COFFEE CUPS» 1 նամականիշով բացիկի, համաձայն N 3 հավելվածի:

4) Մեծանուն հայեր. Վալենտին Պոդպոմոգովի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «1924-1998. ՎԱԼԵՆՏԻՆ ՊՈԴՊՈՄՈԳՈՎ. VALENTIN PODPOMOGOV» և «1924-1998. ՎԱԼԵՆՏԻՆ ՊՈԴՊՈՄՈԳՈՎ. VALENTIN PODPOMOGOV. ԻՄ ՄԵՂՔԸ. 1983. MEA CULPA» 2 նամականիշի, համաձայն N 4 և N 5 հավելվածների:

5) Աշխարհահռչակ հայեր. Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ. SERGEI PARAJANOV. 1924-1990. ՀԱՅ ԿԻՆՈՌԵԺԻՍՈՐ. ARMENIAN FILM DIRECTOR» և «1924-1990. ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ. SERGEI PARAJANOV. ՎԱՐԻԱՑԻԱ ՊԻՆՏՈՒՐԻԿԻՈՅԻ ՈՒ ՌԱՖԱՅԵԼԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ. VARIATION ON THEMES

BY PINITURICCHIO AND RAPHAEL/1989» 2 նամականիշի, համաձայն N 6 և N 7 հավելվածների:

6) Աշխարհահռչակ հայեր. Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «1924-2018. ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ. CHARLES AZNAVOUR» 1 նամականիշով գեղաթերթիկի, համաձայն N 8 հավելվածի:

7) Մանկական ֆիլատելիա. Հայկական մուլտֆիլմեր թեմային նվիրված «ՀԵՔԻԱԹ ՀԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ. A TALE ABOUT THE MIRROR» 1 նամականիշի, համաձայն N 9 հավելվածի:

8) Հայկական ֆիլմեր. Հայկական ֆիլմեր թեմային նվիրված «ԽՈՇՈՐ ՇԱՀՈՒՄ. THE BIG WIN. ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼՄԵՐ. ARMENIAN FILMS» 1 նամականիշով գեղաթերթիկի, համաձայն N 10 հավելվածի:

9) Արագած լեռը հայ գեղանկարչության մեջ. Արագած լեռը հայ գեղանկարչության մեջ թեմային նվիրված «ԱՐԱԳԱԾ ԼԵՌԸ ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ. MOUNT ARAGATS IN THE ARMENIAN PAINTING. ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ. GEVORG BASHINJAGHIAN. «Արագած». 1905. "Aragats". ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ. GEVORG BASHINJAGHIAN. «Արագած». 1917. "Aragats". ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ. GEVORG BASHINJAGHIAN. «Արագած». 1911. "Aragats". ԳԱԲՐԻԵԼ ԳՅՈՒՐՋՅԱՆ. GABRIEL GYURJIAN. «Արագած». 1925. "Aragats". ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՐԴԱՐՅԱՆ. HOVHANNES ZARDARIAN. "The dawn over Aragats". 1953. «Լուսաբացը Արագածի վրա»» 5 նամականիշով գեղաթերթիկի, համաձայն N 11 հավելվածի:

3. Գործողության մեջ դնել՝

1) Միջազգային. Եվրասիական տնտեսական միություն թեմային նվիրված «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ. ЕВРАЗИЙСКИЙ ЭКОНОМИЧЕСКИЙ СОЮЗ» 1 նամականիշը, անվանագինը՝ 320 դրամ, տպաքանակը՝ 9000 հատ:

2) Մեծանուն հայեր. Պարույր Սևակի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ. PARUYR SEVAK/1924-1971. ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ. ARMENIAN POET» 1 նամականիշով գեղաթերթիկը, անվանագինը՝ 560 դրամ, տպաքանակը՝ 10 000 հատ:

3) Մեծանուն հայեր. Վրույր Գալստյանի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «հայ նկարիչ. ՎՐՈՒՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ. VRUIR GALSTYAN. Armenian painter. 1924-1996. 100TH. ԱՄՅԱԿ. ANNIVERSARY. ԲՆԱՆԿԱՐ. 1966. LANDSCAPE. ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ. 1964. SELF-PORTRAIT. ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆԵՐ. 1967. STUDENTS. ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ. ՍՈՒՐՃԻ ԳԱՎԱԹՆԵՐ1986. STILL LIFE. COFFEE CUPS» 1 նամականիշով բացիկը, անվանագինը՝ 400 դրամ, տպաքանակը՝ 1000 հատ:

4) Մեծանուն հայեր. Վալենտին Պոդպոմոգովի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «1924-1998. ՎԱԼԵՆՏԻՆ ՊՈԴՊՈՄՈԳՈՎ. VALENTIN PODPOMOGOV» և «1924-1998. ՎԱԼԵՆՏԻՆ ՊՈԴՊՈՄՈԳՈՎ. VALENTIN PODPOMOGOV. ԻՄ ՄԵՂՔԸ. 1983. MEA CULPA» 2 նամականիշը, անվանագինը՝ 320 և 380 դրամ, տպաքանակը յուրաքանչյուրից՝ 10 000 հատ:

5) Աշխարհահռչակ հայեր. Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ. SERGEI PARAJANOV. 1924-1990. ՀԱՅ ԿԻՆՈՌԵԺԻՍՈՐ. ARMENIAN FILM DIRECTOR» և «1924-1990. ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ. SERGEI PARAJANOV. ՎԱՐԻԱՑԻԱ ՊԻՆՏՈՒՐԻԿԻՈՅԻ ՈՒ ՌԱՖԱՅԵԼԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ. VARIATION ON THEMES BY PINITURICCHIO AND RAPHAEL/1989» 2 նամականիշը, անվանագինը՝ 320 և 380 դրամ, տպաքանակը յուրաքանչյուրից՝ 15 000 հատ:

6) Աշխարհահռչակ հայեր. Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «1924-2018. ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ. CHARLES AZNAVOUR» 1 նամականիշով գեղաթերթիկը, անվանագինը՝ 500 դրամ, տպաքանակը՝ 80 000 հատ:

7) Մանկական ֆիլատելիա. Հայկական մուլտֆիլմեր թեմային նվիրված «ՀԵՔԻԱԹ ՀԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ. A TALE ABOUT THE MIRROR» 1 նամականիշը՝ 380 դրամ, տպաքանակը՝ 10 000 հատ:

8) Հայկական ֆիլմեր. Հայկական ֆիլմեր թեմային նվիրված «ԽՈՇՈՐ ՇԱՀՈՒՄ. THE BIG WIN. ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼՄԵՐ. ARMENIAN FILMS» 1 նամականիշով գեղաթերթիկը՝ 800 դրամ, տպաքանակը՝ 10 000 հատ:

9) Արագած լեռը հայ գեղանկարչության մեջ. Արագած լեռը հայ գեղանկարչության մեջ թեմային նվիրված «ԱՐԱԳԱԾ ԼԵՌԸ ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ. MOUNT ARAGATS IN THE ARMENIAN PAINTING. ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ. GEVORG BASHINJAGHIAN. «Արագած». 1905. “Aragats”. ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ. GEVORG BASHINJAGHIAN. «Արագած». 1917. “Aragats”. ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ. GEVORG BASHINJAGHIAN. «Արագած». 1911. “Aragats”. ԳԱԲՐԻԵԼ ԳՅՈՒՐՋՅԱՆ. GABRIEL GYURJIAN. «Արագած». 1925. “Aragats”. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՐԴԱՐՅԱՆ. HOVHANNES ZARDARIAN. “The dawn over Aragats”. 1953. «Լուսաբացը Արագածի վրա»» 5 նամականիշով գեղաթերթիկը, անվանագինը՝ 200, 320, 380, 400 և 560 դրամ, տպաքանակը յուրաքանչյուրից՝ 10 000 հատ:

4/22/2024

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ